



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2011թ. առաջին կիսամյակում /վերլուծություն/

2011թ. առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 91525 գործարքներ, որոնց քանակը, 2010թ. նրկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 1.5%-ով, իսկ 2010թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 12.9%-ով :

2011թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 22436 օտարման գործարքների 78.0%-ը կազմել են առուվաճառքները, 21.4%-ը՝ նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 37.8%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.7%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2011թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2010թ. նրկորդ կիսամյակի համեմատ, նվազել է 8.2%-ով, իսկ 2010թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 7.3%-ով: 2011թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 6530 առուվաճառքի գործարքների 67.6%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2011թ. առաջին կիսամյակում, 2010թ. նրկորդ կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 9.1%-ով, իսկ 2010թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 16.9%-ով:

2011թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

| Վարչական շրջաններ                          | Միջին գները /դրամ/     |                        |                        |
|--|------------------------|------------------------|------------------------|
|  | առաջին կիսամյակ 2010թ. | առաջին կիսամյակ 2011թ. | նրկորդ կիսամյակ 2010թ. |
| Կենտրոն                                    | 471400                 | 444300                 | 454300                 |
| Արաբկիր                                    | 383100                 | 348100                 | 371700                 |
| Քանաքեռ-Զենյթուն                           | 287200                 | 268200                 | 284200                 |
| Նոր-Նորք                                   | 239700                 | 225800                 | 232200                 |
| Ավան                                       | 241400                 | 232100                 | 239300                 |
| Էրեբունի                                   | 251300                 | 234600                 | 246100                 |
| Շենգավիթ                                   | 255000                 | 232500                 | 246800                 |
| Դավթաշեն                                   | 275000                 | 258100                 | 269600                 |
| Աջափնյակ                                   | 240800                 | 223200                 | 231100                 |
| Մալաթիա-Սեբաստիա                           | 243400                 | 221000                 | 235200                 |
| Նուբարաշեն                                 | 144700                 | 148500                 | 148500                 |
| <b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b> | <b>275700</b>          | <b>257900</b>          | <b>269000</b>          |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. առաջին կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները, 2010թ. նրկորդ կիսամյակի համեմատ, նվազել են 4.1%-ով, իսկ 2010թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 6.5%-ով:

2011թ. առաջին կիսամյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1905 բնակարաններ, որոնց քանակը, 2010թ. նրկորդ կիսամյակի համեմատ, նվազել է 12.6%-ով, իսկ 2010թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 4.3%-ով:

2011թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

| Մարզեր    | Քաղաքներ   | Միջին գները /դրամ/     |                        |                        |
|-----------|------------|------------------------|------------------------|------------------------|
|           |            | առաջին կիսամյակ 2010թ. | առաջին կիսամյակ 2011թ. | նրկորդ կիսամյակ 2010թ. |
| Արագածոտն | Աշտարակ    | 142500                 | 133100                 | 141300                 |
|           | Ապարան     | 45200                  | 47800                  | 45800                  |
|           | Թալին      | 52700                  | 59300                  | 56600                  |
| Արարատ    | Արտաշատ    | 94300                  | 94800                  | 97100                  |
|           | Մասիս      | 129200                 | 126900                 | 134000                 |
|           | Վեդի       | 94000                  | 93300                  | 96400                  |
|           | Արարատ     | 87100                  | 82300                  | 85700                  |
| Արմավիր   | Վաղարշապատ | 160800                 | 146700                 | 160600                 |
|           | Արմավիր    | 121500                 | 123000                 | 126300                 |
|           | Մեծամոր    | 82900                  | 84200                  | 85300                  |

|             |             |        |        |        |
|-------------|-------------|--------|--------|--------|
| Գնդարքունիք | Սևան        | 94500  | 90600  | 96900  |
|             | Գավառ       | 46200  | 49000  | 47900  |
|             | Մարտունի    | 85000  | 88300  | 86800  |
|             | Վարդենիս    | 32800  | 33400  | 32200  |
|             | Ճամբարակ    | 19400  | 21800  | 20200  |
| Լոռի        | Վանաձոր     | 92600  | 90600  | 94000  |
|             | Ստեփանավան  | 57800  | 63600  | 59700  |
|             | Սպիտակ      | 80300  | 85500  | 83400  |
|             | Ալավերդի    | 31400  | 35000  | 33400  |
|             | Տաշիր       | 35600  | 39400  | 37000  |
|             | Թումանյան   | 6100   | 9900   | 6200   |
|             | Շամլուղ     | 3400   | 6100   | 3400   |
|             | Ախթալա      | 14200  | 17000  | 14300  |
| Կոտայք      | Աբովյան     | 161000 | 142400 | 153500 |
|             | Նոր Հաճն    | 127900 | 126200 | 134500 |
|             | Բյուրեղավան | 103700 | 105600 | 107400 |
|             | Եղվարդ      | 116900 | 106500 | 111900 |
|             | Հրազդան     | 63300  | 60200  | 63500  |
|             | Ծաղկաձոր    | 181500 | 182000 | 178800 |
|             | Չարենցավան  | 78600  | 75400  | 78400  |
| Շիրակ       | Գյումրի     | 120700 | 109500 | 120700 |
|             | Արթիկ       | 59400  | 63600  | 62700  |
|             | Մարալիկ     | 30700  | 31900  | 30500  |
| Սյունիք     | Գորիս       | 138900 | 132700 | 139700 |
|             | Կապան       | 99800  | 102700 | 103500 |
|             | Սիսիան      | 79900  | 86700  | 82100  |
|             | Մեղրի       | 58700  | 64800  | 61200  |
|             | Ագարակ      | 33300  | 36700  | 34400  |
|             | Քաջարան     | 60300  | 64200  | 61300  |
|             | Դաստակերտ   | 8000   | 8000   | 8000   |
| Վայոց Ձոր   | Վայք        | 71700  | 75900  | 72100  |
|             | Եղեգնաձոր   | 107200 | 109200 | 110500 |
|             | Ջերմուկ     | 113300 | 122600 | 120000 |
| Տավուշ      | Դիլիջան     | 100600 | 106200 | 108200 |
|             | Իջևան       | 139500 | 130100 | 136200 |
|             | Բերդ        | 42100  | 45500  | 42200  |
|             | Նոյեմբերյան | 33700  | 37000  | 34200  |
|             | Այրում      | 24100  | 25900  | 24100  |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները, 2010թ. նրկորդ կիսամյակի համեմատ, նվազել են 1.3%-ով, իսկ 2010թ. առաջին կիսամյակի համեմատ՝ աճել 0.2%-ով:

2011թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 2287 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևանում՝ 605, մարզերում միասին վերցրած՝ 1682: 2010թ. նրկորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 20.2%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 4.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 24.6%-ով:

2011թ. առաջին կիսամյակում, 2010թ. առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 1.0%-ով, ընդ որում, Երևան քաղաքում նվազել է 5.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ աճել 0.6%-ով:

2011թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /ապամանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինագված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

| Վարչական շրջաններ                        | Միջին գները /դրամ/    |                       |                        |
|--|-----------------------|-----------------------|------------------------|
|  | առաջին կիսամյակ 2010թ | առաջին կիսամյակ 2011թ | երկրորդ կիսամյակ 2010թ |
| Կենտրոն                                  | 486100                | 466900                | 481300                 |
| Արաբկիր                                  | 389900                | 376800                | 396200                 |
| Քանաքեռ-Զեյթուն                          | 291900                | 280600                | 295000                 |
| Նորք-Մարաշ                               | 285800                | 279000                | 282500                 |
| Ավան                                     | 245600                | 241500                | 252500                 |
| Էրեբունի                                 | 256800                | 240300                | 256900                 |
| Շենգավիթ                                 | 258600                | 243800                | 261000                 |
| Դավթաշեն                                 | 281700                | 271300                | 283700                 |
| Աջափնյակ                                 | 246900                | 237300                | 248000                 |
| Մալաթիա-Սեբաստիա                         | 247000                | 232300                | 249000                 |
| Նուբարաշեն                               | 147900                | 149900                | 150200                 |
| <b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b> | <b>285300</b>         | <b>274500</b>         | <b>286900</b>          |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. առաջին կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2010թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել են 4.3%-ով, իսկ 2010թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 3.8%-ով:

2011թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

| Մարզեր      | Քաղաքներ    | Միջին գները /դրամ/     |                        |                         |
|-------------|-------------|------------------------|------------------------|-------------------------|
|             |             | առաջին կիսամյակ 2010թ. | առաջին կիսամյակ 2011թ. | երկրորդ կիսամյակ 2010թ. |
| Արագածոտն   | Աշտարակ     | 148100                 | 138250                 | 148000                  |
|             | Ապարան      | 48900                  | 49450                  | 49800                   |
|             | Թալին       | 55600                  | 60150                  | 58600                   |
| Արարատ      | Արտաշատ     | 100600                 | 102250                 | 102100                  |
|             | Մասիս       | 131600                 | 131450                 | 138950                  |
|             | Վեդի        | 97500                  | 96600                  | 101200                  |
|             | Արարատ      | 93200                  | 85750                  | 91000                   |
| Արմավիր     | Վաղարշապատ  | 167900                 | 162100                 | 169300                  |
|             | Արմավիր     | 125900                 | 128000                 | 131050                  |
| Գեղարքունիք | Սևան        | 97000                  | 95300                  | 100900                  |
|             | Գավառ       | 49200                  | 51000                  | 51500                   |
|             | Մարտունի    | 88400                  | 89750                  | 90680                   |
|             | Վարդենիս    | 35200                  | 36050                  | 35250                   |
|             | Ճամբարակ    | 21800                  | 24250                  | 23150                   |
| Լոռի        | Վանաձոր     | 98600                  | 99650                  | 100380                  |
|             | Ստեփանավան  | 61900                  | 65150                  | 63800                   |
|             | Սպիտակ      | 82900                  | 89850                  | 87000                   |
|             | Ալավերդի    | 35400                  | 36500                  | 36500                   |
|             | Տաշիր       | 39100                  | 42950                  | 40450                   |
|             | Թումանյան   | 10600                  | 11850                  | 10800                   |
|             | Շամլուղ     | 7500                   | 8500                   | 7500                    |
|             | Ախթալա      | 18200                  | 19000                  | 18200                   |
| Կոտայք      | Աբովյան     | 169100                 | 153300                 | 169550                  |
|             | Նոր Հաճն    | 135400                 | 133350                 | 138180                  |
|             | Բյուրեղավան | 109300                 | 108700                 | 110900                  |
|             | Եղվարդ      | 128400                 | 111650                 | 122500                  |
|             | Հրազդան     | 66200                  | 64700                  | 67900                   |
|             | Ծաղկաձոր    | 309100                 | 311950                 | 318500                  |
|             | Չարենցավան  | 81400                  | 77700                  | 82450                   |

|           |             |        |        |        |
|-----------|-------------|--------|--------|--------|
| Շիրակ     | Գյումրի     | 124600 | 119600 | 129200 |
|           | Արթիկ       | 62200  | 64550  | 65050  |
|           | Մարալիկ     | 32400  | 34150  | 33000  |
| Սյունիք   | Գորիս       | 144500 | 139550 | 145050 |
|           | Լյապան      | 104800 | 106400 | 106900 |
|           | Սիսիան      | 84900  | 88200  | 86350  |
|           | Մեղրի       | 61100  | 66450  | 63750  |
|           | Ազարակ      | 35300  | 37700  | 35900  |
|           | Դաստակերտ   | 10500  | 10500  | 10500  |
| Վայոց Ձոր | Վայք        | 75100  | 77450  | 76200  |
|           | Եղեգնաձոր   | 114900 | 114100 | 115000 |
|           | Ջերմուկ     | 118900 | 124000 | 123300 |
| Տավուշ    | Դիլիջան     | 105500 | 108800 | 113700 |
|           | Իջևան       | 142900 | 136350 | 141700 |
|           | Բերդ        | 44400  | 47200  | 44650  |
|           | Նոյեմբերյան | 35700  | 38300  | 36200  |
|           | Այրում      | 26000  | 27050  | 26000  |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2010թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել են 2.3%-ով, իսկ 2010թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 0.3%-ով:

Ընդհանուր առմամբ, 2011թ. առաջին կիսամյակում հանրապետությունում օտարվել են 7800 միավոր /5377.43 հա/ հողեր, որից Երևանում՝ 315 միավոր /104.96 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4156 միավոր /4905.18 հա/, որից Երևանում՝ 17 միավոր /1.88 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 2640 միավոր /253.57 հա/, որից Երևանում՝ 245 միավոր /17.51 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 843 միավոր /138.87 հա/, որից Երևանում՝ 48 միավոր /84.84 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 69 միավոր /57.53 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.74 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 51 միավոր /19.34 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 41 միավոր /2.94 հա/:

2011թ. առաջին կիսամյակում հանրապետությունում օտարված հողերից 6765 միավորի /4914.12 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 251 միավոր /97.86 հա/, նվիրատվության գործարքներ՝ 956 միավոր /433.48 հա/, որից Երևանում՝ 59 միավոր /6.51 հա/ և փոխանակության գործարքներ՝ 79 միավոր /29.83 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.59 հա/:

Հանրապետությունում 2011թ. առաջին կիսամյակում, 2010թ. առաջին կիսամյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 1.4%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 0.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 3.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 30.2%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են կոտայքի մարզում՝ 1495.10 հա, որից 1395.96 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 25.3%-ը կամ 1711 գործարքներ /1890.85 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 23 միավոր /2.64 հա/, իսկ 73.9%-ը կամ 5002 միավորը /3014.42 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 223 միավոր /95.18 հա/: 2011թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 52 գործարք /8.85 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2011թ. առաջին կիսամյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

|             | <b>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</b> |               |                                  |               |                                     |               |                                |               | <b>Մասնավոր սեփականություն հանդիսացող</b> |               |                                  |               |                                     |               |                                |               |
|-------------|--|---------------|----------------------------------|---------------|-------------------------------------|---------------|--------------------------------|---------------|---|---------------|----------------------------------|---------------|-------------------------------------|---------------|--------------------------------|---------------|
|             | Գյուղատնտեսական նշանակության հողերի                    |               | Արդյունաբերական օբյեկտների հողեր |               | Բնակավայրերի հողեր                  |               |                                |               | Գյուղատնտեսական նշանակության հողերի       |               | Արդյունաբերական օբյեկտների հողեր |               | Բնակավայրերի հողեր                  |               |                                |               |
|             |  |               |                                  |               | բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի |               | հասարակ կան կառուցապատ. հողերի |               |   |               |                                  |               | բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի |               | հասարակ կան կառուցապատ. հողերի |               |
|             | Միավոր   | Մակերեսը /հա/ | Միավոր                           | Մակերեսը /հա/ | Միավոր                              | Մակերեսը /հա/ | Միավոր                         | Մակերեսը /հա/ | Միավոր                                    | Մակերեսը /հա/ | Միավոր                           | Մակերեսը /հա/ | Միավոր                              | Մակերեսը /հա/ | Միավոր                         | Մակերեսը /հա/ |
| Երևան       | 0  | 0.00          | 3                                | 0.54          | 10                                  | 0.66          | 10                             | 1.43          | 14  | 1.51          | 2                                | 0.20          | 184                                 | 13.08         | 23                             | 80.39         |
| Արագածոտն   | 52   | 68.31         | 2                                | 0.32          | 14                                  | 1.55          | 25                             | 2.42          | 273                                       | 247.79        | 4                                | 0.74          | 132                                 | 14.97         | 9                              | 0.42          |
| Արարատ      | 55   | 280.71        | 8                                | 4.12          | 111                                 | 9.00          | 48                             | 2.01          | 284                                       | 240.04        | 5                                | 4.63          | 260                                 | 22.16         | 22                             | 5.41          |
| Արմավիր     | 63   | 150.51        | 5                                | 0.90          | 3                                   | 0.09          | 36                             | 1.31          | 379                                       | 955.16        | 1                                | 1.11          | 258                                 | 24.62         | 25                             | 1.32          |
| Գեղարքունիք | 36   | 34.84         | 5                                | 3.16          | 90                                  | 10.33         | 60                             | 5.16          | 298                                       | 173.90        | 0                                | 0.00          | 97                                  | 10.79         | 20                             | 1.77          |
| Լոռի        | 12   | 8.34          | 5                                | 0.31          | 18                                  | 0.73          | 70                             | 1.06          | 662                                       | 388.66        | 0                                | 0.00          | 157                                 | 19.31         | 23                             | 2.04          |
| Կոտայք      | 203  | 1143.02       | 10                               | 34.33         | 170                                 | 13.80         | 111                            | 2.67          | 617                                       | 252.94        | 1                                | 0.10          | 421                                 | 37.92         | 50                             | 3.21          |
| Շիրակ       | 5  | 15.55         | 2                                | 0.22          | 76                                  | 2.64          | 72                             | 1.68          | 170                                       | 193.14        | 3                                | 0.15          | 77                                  | 8.83          | 9                              | 1.24          |
| Սյունիք     | 4  | 5.40          | 7                                | 1.60          | 17                                  | 1.42          | 30                             | 0.93          | 196                                       | 210.18        | 0                                | 0.00          | 40                                  | 4.25          | 12                             | 0.33          |
| Վայոց Ձոր   | 40   | 48.67         | 0                                | 0.00          | 19                                  | 2.11          | 48                             | 7.02          | 67  | 39.93         | 0                                | 0.00          | 21                                  | 1.77          | 20                             | 2.96          |
| Տավուշ      | 8  | 4.64          | 1                                | 0.02          | 65                                  | 11.22         | 32                             | 2.43          | 62  | 32.63         | 1                                | 0.004         | 69                                  | 6.73          | 5                              | 0.14          |
| Ընդամենը    | 478  | 1759.99       | 48                               | 45.52         | 593                                 | 53.55         | 542                            | 28.12         | 3022                                      | 2735.88       | 17                               | 6.93          | 1716                                | 164.43        | 218                            | 99.23         |

Ստորև ներկայացվում է 2011թ. առաջին կիսամյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

|             | <b>Ուղղակի վաճառք</b> |               |                                  |               |                                      |               |                                |               | <b>Աճուրդ վաճառք</b> |               |                            |               |                                  |               |                                      |               |                                |       |
|-------------|-----------------------|---------------|----------------------------------|---------------|--------------------------------------|---------------|--------------------------------|---------------|----------------------|---------------|----------------------------|---------------|----------------------------------|---------------|--------------------------------------|---------------|--------------------------------|-------|
|             | Ընդամենը              |               | Արդյունաբերական օբյեկտների հողեր |               | Բնակավայրերի հողեր                   |               |                                |               | Ընդամենը             |               | Գյուղ. նշանակության հողերի |               | Արդյունաբերական օբյեկտների հողեր |               | Բնակավայրերի հողեր                   |               |                                |       |
|             |                       |               |                                  |               | բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի |               | հասարակ կան կառուցապատ. հողերի |               |                      |               |                            |               |                                  |               | բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի |               | հասարակ կան կառուցապատ. հողերի |       |
|             | Միավոր                | Մակերեսը /հա/ | Միավոր                           | Մակերեսը /հա/ | Միավոր                               | Մակերեսը /հա/ | Միավոր                         | Մակերեսը /հա/ | Միավոր               | Մակերեսը /հա/ | Միավոր                     | Մակերեսը /հա/ | Միավոր                           | Մակերեսը /հա/ | Միավոր                               | Մակերեսը /հա/ |                                |       |
| Երևան       | 15                    | 1.20          | 3                                | 0.54          | 7                                    | 0.40          | 5                              | 0.26          | 8                    | 1.44          | 0                          | 0.00          | 0                                | 0.00          | 3                                    | 0.27          | 5                              | 1.17  |
| Արագածոտն   | 5                     | 0.18          | 0                                | 0.00          | 1                                    | 0.10          | 4                              | 0.08          | 83                   | 71.23         | 47                         | 67.12         | 2                                | 0.32          | 13                                   | 1.45          | 21                             | 2.34  |
